Արիմիութենական հաղթանակ

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀՈՒԼԻՍ 2024

7

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Բովանդակություն

Ողջույնի խոսք

«Հայաստանի Հանրապետության զբաղվածության ռազմավարության» նախագծի աշխատանքային քննարկում

ԱՄԿ տարածաշրջանային արհմիութենական համաժողով

Շնորհավորելով հանքագործի և մետալուրգի օրը

Արհմիութենական հաղթանակ «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ում

Բարի գալուստ,
«Արհմիութենական անցուդարձ» ամսագիր

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրը հանդիսանում է Հայաստանում արհմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: Արհմիութենական առօրյան հարուստ է բազմազան միջոցառումներով, ծրագրերով, որոնք ուղղված են աշխատողների իրազեկմանը, աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, մասնագիտական իրավունքների ներկայացմանը, պաշտպանմանը և առաջ մղմանը:

Մենք վստահ ենք՝ այսօր ժամանակակից աշխարհում ամենազորեղ զենքը գիտելիքն է և տեղեկտավության տարածումը:

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ

«Հայաստանի Հանրապետության զբաղվածության ռազմավարության» նախագծի աշխատանքային քննարկում

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայում 2024 թվականի հուլիսի 2-ին տեղի է ունեցել «Հայաստանի Հանրապետության զբաղվածության ռազմավարության» նախագծի աշխատանքային քննարկում: Քննարկումն իրականացվել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) համագործակցության շրջանակներում:

ԱՄԿ տարածաշրջանային արհմիութենական համաժողով

Երևանում 2024 թվականի հուլիսի 10-12-ը կայացավ «Արհմիությունների հզորացում Աշխատողներին կազմակերպելու կարողություն տնտեսության և զբաղվածության նոր ոլորտներում» թեմայով Աշխատանքի միջազգային կազմակերպության տարածաշրջանային եռօրյա աշխատաժողովը, որին մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի, Ղազախստանի, Ուզբեկստանի և Տաջիկստանի հանրապետությունների արհմիությունների ներկայացուցիչները։

Բացման խոսքով հանդես եկան ՀԱՄԿ-ի նախագահ՝ Էլեն Մանասերյանը, ԱՍՀՆ նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, ԱՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի աշխատավորների գործունեության հարցերով գրասենյակի ղեկավար՝ Սերգեյուս Գլովացկասը, Համաեվրոպական արհմիությունների կոնֆեդերացիայի գործադիր քարտուղար Անտոն Լեպպիկը, ԱՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի աշխատավորների գործունեության հարցերով ավագ մասնագետ՝ Գոչա Ալեքսանդրիան, ԱՄԿ ազգային համակարգող՝ Նունե Հովհաննիսյանը։

Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին գիգ տնտեսության, թվայնացման զարգացման, ինչպես նաև ոչ ֆորմալ տնտեսության պայմաններում առկա մարտահրավերները, արհմիությունների արձագանքը և հետագա անելիքները։
Մասնակիցներն, ըստ երկրների, ներկայացրեցին այն մարտահրավերները, որոնց բախվում են իրենց արհմիությունները և աշխատողները։
ԱՄԿ փորձագետները ներկայացրեցին եվրոպական հաջողված փորձը և ԱՄԿ կոնվենցիաների մասին տեղեկատվություն, հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները։
Սերգեյուս Գլովացկասը խոսեց աշխատավորների շարժման ապագայի և մարտահրավերների մասին։

Հայաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի ներկայացուցիչները ներկայացրեցին բռնի տեղահանված անձանց արհմիություններում անդամագրելու և ինտեգրելու փորձը:
Էլեն Մանասերյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետությունում ոչ ֆորմալ տնտեսության խնդիրները, մարտահրավերները, վիճակագրությունը Հայաստանի Հանրապետությունում:
Ներկայացվեց նաև APR group հասարակական կազմակերպության կողմից արհմիությունների նախաձեռնությամբ իրականացրած Հայաստանում առաքիչների աշխատանքային պայմանների վերաբերյալ հետազոտությունը:
ԱՄԿ Արևելյան Եվրոպայի և կենտրոնական Ասիայի տեխնիկական պատասխանատու Մայքլ Վատտը հանդես եկավ «Երիտասարդ աշխատողների կազմակերպում, խթանում որոշումների կայացման գործընթացում ներգրավում՝ մարտահրավեր և նորարարական ռազմավարություններ» թեմայով ներկայացմամբ:
Հեռավար կապով աշխատաժողովին մասնակցեց նաև ԱՄԿ ոչ ֆորմալ տնտեսության ֆորմալացման թիմի համակարգող Մամադու Կաբա Սուարեն՝ խոսելով արդյունավետ հաղորդակցման ցանցերի ստեղծման և աշխատողների ֆորմալ դաշտ բերելու մասին:
Աշխատաժողովը լի էր հետաքրքիր և բազմաբովանդակ քննարկումներով:
Մասնակիցների գնահատմամբ աշխատաժողովն արդյունավետ էր և ուսուցողական:
Այն դարձավ փորձի փոխանակման և գիտելիքների լավարկման անհրաժեշտ հարթակ:
Աշխատաժողովի արդյունքում մշակվեց արհմիությունների գործունեության ճանապարհային քարտեզ:

Շնորհավորելով հանքագործի և մետալուրգի օրը

Յուրաքանչյուր տարի հուլիսի երկրորդ կիրակի օրը նշվում է հանքագործի և մետալուրգի օրը: ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը Հանքագործների, մետալուրգների և ոսկերիչների արհմիությունների ՃՀՄ հրավերով մեկնել էր Սյունիքի մարզ մասնակցելու և շնորհավորելու ոլորտի աշխատողներին: Էլեն Մանասերյանը նախ Ագարակի, ապա Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատներում շնորհավորեց աշխատակիցներին՝ նրանց հանձնելով նաև ՃՀՄ կողմից պատրաստած պատվո կրծքանշաններ անբասիր և նվիրված աշխատանքի համար: Իր շնորհավորական խոսքում Է. Մանասերյանը բարձր գնահատեց յուրաքանչյուր աշխատողի ներդրումն ու ավանդը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գործում: Ինչպես նաև խոսեց աշխատողների արժանապատիվ աշխատանքային պայմանների ու առողջ ու անվտանգ աշխատանքային պայմանների առավել բարձր մակարդակով ապահովման կարևորության մասին, բարձր գնահատեց ոլորտում կայացած սոցիալական գործընկերությունը:

Արիմիութենական հաղթանակ «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ում

«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի արհեստակցական կազմակերպությունը դատարանում հաղթանակ է տարել «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի արհեստակցական կազմակերպության նախագահի իրավունքները սահմանափակող գործողության նկատմամբ, քանի որ 2023 թվականից ընկերության ղեկավարությունն արգելում էր արհեստակցական կազմակերպության նախագահին մուտք գործել ընկերության տարածք արհեստակցական կազմակերպության նախագահի իրավունքների և պարտականությունների իրականացման համար:
Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) հետ համագործակցող փաստաբան Ն. Համբարձումյանը «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի արհեստակցական կազմակերպության անունից դիմել էր դատարան ընդդեմ «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Կ. Հակոբյանի՝ պահանջելով չխոչընդոտել «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի արհեստակցական կազմակերպության նախագահ Հ. Ալեքյանի՝ որպես ընկերության արհեստակցական կազմակերպության նախագահի իրավունքների և պարտականությունների կատարմանը և ապահովել վերջինիս ազատ մուտքը և ելքը ընկերության տարածք յուրաքանչյուր օր, օրական 24 ժամ գրաֆիկով՝ առանց սահմանափակման, քանի որ հայցադիմումի ներկայացման պահին ընկերությունն աշխատել է 24 ժամ գրաֆիկով:

Երևանի քաղաքացիական դատարանը մասնակի բավարարել է հայցը հօգուտ արհեստակցական կազմակերպության՝ պարտավորեցնելով «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ին երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 09:00-ից 18:00-ն, արհեստակցական կազմակերպության նախագահին թույլատրել անարգել մուտք գործել ընկերության տարածք: Դատարանը որոշումը կայացնելիս հաշվի է առել ընկերության աշխատանքային ժամերի փոփոխությունը, քանի որ ընկերությունն այժմ աշխատում է միայն աշխատանքային օրերին և նշված ժամերին:

Այս հաղթանակը ոչ միայն Հ. Ալեքյանի և «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի արհեստակցական կազմակերպության հաղթանակն է, այլ նաև բոլոր արհեստակցական կազմակերպությունների: Հաղթանակ, որը կարող է օրինակ ծառայել արհեստակցական կազմակերպությունների իրավունքների պաշտպանության համար:

Հիշեցնենք նաև, որ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի օգնությամբ Հ. Ալեքյանը դեռևս 2023 թվականին ևս մեկ հաղթանակ է տարել ընդդեմ «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի ՝ վերականգնելով իր խախտված աշխատանքային իրավունքները:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3
Հեռ.՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am